



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 732 - Ա

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովին մասնակցելու նպատակով 2022 թվականի հունիսի 28-ից հուլիսի 1-ը Ֆրանսիայի Հանրապետություն (Լիոն) գործուղել պատվիրակություն՝ համաձայն հավելվածի:

2. Պատվիրակության անդամների՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարել՝

1) Վաչե Տերտերյանինը, Արտակ Ջումայանինը, Արամ Խաչատրյանինը, Էդուարդ Հովհաննիսյանինը, Նազելի Բաղդասարյանինը, Հայկ Հարությունյանինը, Արսեն Աբրահամյանինը, Լիլիթ Սարոյանինը, Տարոն Մարտիրոսյանինը, Արմենուհի Պողոսյանինը, Էլիզ Գևորգյանինը, Կարեն Բայանինը, Անահիտ Ոսկանյանինը, Հասմիկ Մկրտչյանինը և Նվարդ Մանուկյանինը, իսկ Կարեն Սարգսյանինը և Վարդանուշ Մնացականյանինը՝ միայն ճանապարհածախսը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

2) Գայանե Մանուկյանին՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Կարեն Սարգսյանի և Վարդանուշ Մնացականյանի գործուղման մյուս ծախսերը, իսկ Հայկ Ղալումյանի և Նարեկ Ղուշյանի գործուղման բոլոր ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում պատվիրակության՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի N 732 - Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆՈՂ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (պատվիրակության ղեկավար)
Ա. Ջումայան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Կ. Սարգսյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ (28.06.2022 թ. -02.07.2022 թ.)
Ա. Խաչատրյան	ՀՀ Լոռու մարզպետ
Է. Հովհաննիսյան	ՀՀ Արմավիրի մարզպետ
Ն. Բաղդասարյան	ՀՀ Շիրակի մարզպետ
Հ. Ղալումյան	ՀՀ Տավուշի մարզպետ (28.06.2022 թ. - 03. 07. 2022 թ.)
Ն. Ղուշյան	ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ (28.06.2022 թ. - 03. 07. 2022 թ.)
Հ. Հարությունյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ
Ա. Աբրահամյան	ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղար
Լ. Սարոյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության պետ
Տ. Մարտիրոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ծրագրերի իրականացման վարչության պետ
Ա. Պողոսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող
Է. Գևորգյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային համագործակցության վարչության պետի պարտականությունները կատարող
Կ. Բայան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական

- Ա. Ոսկանյան ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
- Հ. Մկրտչյան ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ
- Վ. Մնացականյան ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ (28.06.2022 թ. - 02.07.2022 թ.)
- Գ. Մանուկյան ՀՀ արտաքին գործերի նախարարության երկկողմ հարաբերությունների առաջին բաժնի երկրորդ քարտուղար
- Ն. Մանուկյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի ավագ մասնագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ